ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/75

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.06.2018թ. թիվ 03/26-3/10354-18 գրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00114153/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.05.2018թ. թիվ ԴՎԱ/1492 գրության հիման վրա, 08.06.2018թ. նախաձեռնել է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու

ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.05.2018թ. թիվ ԴՎԱ/1492 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլաը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին, 2-րդ, 8-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ, 27-րդ և 30-րդ չափաբաժինների մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոնշյալ չափաբաժինների մասով ապրանքների տեխնիկական բնութագրերի քննարկման արդյունքում պարզվեց, որ նրանք տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից և համարժեք չեն դրանց: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունները: սահմանված ժամկետում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են համապատասխան հրավերի պահանջներին, բացառությամբ 30-րդ չափաբաժնով ներկայացրած ապրանքի տեխնիակկան բնութագրի, որը համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված մասնագիտական եզրակացության, չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին: Հիմք ընդունելով Կարգի 48-րդ

կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց 30-րդ չափաբաժնի մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԱԺԷՎ» ՍՊԸ 13.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Պարենային ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «Պարենային ծառայության տեխնիկական միջոցների» ծածկագրով գնանշման հարցում:

Վերոնշված գնանշման հարցման մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 23.04.2018թ. ժամը 11:30-ի տեղի ունեցած նիստի արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 10.05.2018թ. գնահատող հանձնաժողովը՝ շարունակելով աշխատանքները, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 30-րդ չափաբաժով (Խոհանոցային սպասք /Թեյնիկ/) 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (30-րդ չափաբաժնով ընտրության կողմից ներկայացրած գնային առաջարկը կազմել է 5,400,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն):

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ս.թ. մայիսի 10-ին Ընկերությունը, սահմանված կարգով և ժամկետում g.teryan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացրել (ուղարկել) է որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Ս.թ. մայիս 23-ին Ընկերությունը ծանուցվել է, որ. «30-րդ չափաբաժնի մասով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրին բազմաթիվ պարամետրերով, այն է՝ տարողությունը /առնվազն/, ջերմամեկուսիչ բռնակը, հիմքի տրամագիծը /մինչև 220մմ/, բարձրությունը նշված չէ /քթիկի բացարձակ բարձրությունը/, փաթեթավորումը /համաձայն ԳՈՍՏ-ի և հրավերով նախատեսվածի/: Անհրաժեշտ է պարամետրերը սահմանել համաձայն այդ ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի»:

Ի պատասխան Ընկերությունը սահմանված կարգով ս.թ. մայիսի 24-ին ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը:

Սակայն ս.թ. մայիսի 30-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ 30-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին, ուստի այդ չափաբաժնի մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն

օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերջինս երաշխավորում է գնումների մասնակիցների հավասարությունը գնման գործընթացում՝ բացառելով այլ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը, այդ թվում խտրականության դրսևորմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք, մասնավորապես, Ընկերության նկատմամբ: Ավելին, գնահատող հանձնաժողովը գնման գործընթացում չի ապահովել իր հայեցողական իրավունքի միատեսակ կիրառությունը, դրանով իսկ հաստատելով իր կողմից խտրական վերաբերմունքի առերևույթ դրսևորումը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները:

Նախ, պետք է նշել, որ հրավերի 30-րդ չափաբաժնով Ընկերության կողմից ներկայացված բնութագրում որևէ անհամապատասխանություն չկա:

Այսպես, հրավերում նշված է.

- Խոհանոցային սպասք /Թեյնիկ/ – Թեյնիկ 3լ-ոց՝ ալյումինե կափարիչով, ԳՕՍ Р 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի թերթավոր ալյումինից: Թեյնիկի հիմքի տրամագիծը Փ210-ից 220մմ: Բարձրությունը՝ 110-120մմ: Մետաղի հաստությունը հիմքի հատվածում՝ 1,5-ից 2,5մմ: Թեյնիկները փաթեթավորված թղթով ԳՕՍ 8273-75: Փաթեթը

տեղադրված ստվարաթղթե արկղում, յուրաքանչյուր արկղում՝ 4 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնշված՝ «արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ», արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Ընկերության կողմից առաջարկվել է.

- Թեյնիկ՝ ալյումինե կափարիչով, ԳՕՍՏ Р 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի թերթավոր ալյումինից: Թեյնիկի աշխատանքային տարողությունը հնարավորություն է տալիս այն 3 լիտր հեղուկ լիցքավորելու և աշխատանքի ընթացքում օգտագործելու՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց, առանց հեղուկը թափվելու: Թեյնիկի հիմքից մինչև տարողության վերին հատվածի բարձրությունը 110-120մմ: Թեյնիկի հիմքի տրամագիծը՝ ոչ ավել Φ220մմ: Մետաղի հաստությունը հիմքի հատվածում՝ 1,5-ից 2,5մմ: Թեյնիկները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75 կամ տեղադրված անհատական ստվարաթղթե արկղում: Փաթեթը կամ արկղը տեղադրված ստվարաթղթե արկղում, յուրաքանչյուր արկղում 4 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնշված՝ «արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ», արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին:

Դեռ ավելին, Ընկերությունը սահմանված կարգով ուղարկել է պարզաբանման հարցում (կցվում է) և ստացել է հանձնաժողովի պատասխանը, որում մասնավորապես նշվում է.

«Թեյնիկի հիմքի տրամագիծը և բարձրության չափսերը հաշվարկված է այնպես, որ թեյնիկի աշխատանքային տարուղությունը հնարավորություն տա այն 3 լիտր հեղուկ լիցքավորելու և աշխատանքի ընթացքում հնարավոր լինի օգտագործել՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց հեղուկը՝ առանց թափվելու:

Հետևաբար, թեյնիկի ամբողջ տարողությունը՝ մինչև վերին եզրը լիցքավորելուց, տեխնիկական բնութագրում նշված չափսերի դեպքում կարող է հեղուկի քանակը հասնել

մինչև 4 լիտրի, սակայն այն հնարավոր չի լինի օգտագործել, քանի որ վերին եզրից և թեյնիկի քթից /носик/ հեղուկը կթափվի»:

Այսպիսով, վերոգրյալի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ Ընկերության կողմից ներկայացված բնութագրում որևէ անհամապատասխանություն չկա, իսկ Հանձնաժողովի կայացրած որոշումը «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ հիմնավոր չէ:

Բանն այն է, որ եթե նույնիսկ հանձնաժողովը մեկնաբանել է, որ ըստ ընկերության կողմից առաջարկված բնութագրի՝ թեյնիկի տրամագիծը կարող է կազմել 210մմ-ից պակաս, որը համարժեք չէ մրցույթով ներկայացված թեյնիկի հիմքի տրամագծի չափերին, տրամաբանական չէ և չի բխում գնման առարկայի նշանակությունից և օգտագործման բնույթից, քանի որ պատվիրատուի կողմից ներկայացված պարզաբանման մեջ հստակ արձանագրված է, որ էական նշանակություն ունի հետևյալը. «...թեյնիկի աշխատանքային տարողությունը հնարավորություն տա այն 3 լիտր հեղուկ լիցքավորելու և աշխատանքի ընթացքում հնարավոր լինի օգտագործել՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց հեղուկը առանց թափվելու»:

Պետք է նշել նաև, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանգեցրել է նաև վերջինիս գնման գործընթացին մասնակցության իրավունքի խախտմանը, ինչը երաշխավորված է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, և հանգեցրել է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի խախտմանը: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, ընկերության նկատմամբ դրսևորել է խտրական վերաբերմունք: Գնահատող հանձնաժողովը ոչ ստանդարտ մոտեցում է ցուցաբերել՝ խախտելով նաև օրենքի 3-րդ հոդվածով սահմանված մրցակցային, համաչափ և ոչ խտրական հիմունքներով մրցույթների կազմակերպման սկզբունքները: Մասնավորապես, մի դեպքում գնահատող հանձնաժողովը ցանկանում է գնել 3 լիտրանոց այլումինե թեյնիկ, որի աշխատանքային տարողությունը հնարավորություն տա այն 3 լիտր հեղուկ լիցքավորելու և աշխատանքի ընթացքում հնարավոր լինի օգտագործել՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց հեղուկը առանց թափվելու, մյուս դեպքում՝ պահանջում է պարտադիր կերպով շտկել և ներկայացնել նույն բնութագիրը, որը

հայտարարվել է մրցույթի հրավերով՝ ցուցաբերելով կանխակալ և հայեցողական դիրքորոշում:

Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը: Տվյալ պարագայում ընկերությունը ավելի մանրամասն ներկայացրել է նկարագրվող ապրանքի տեխնիկական պայմանները, սակայն հանձնաժողովը կամայական կերպով չի ընդունել ներկայացրած բնութագիրը, դեռ ավելին, Գնումների կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2017թ. մայիս 4-ին ընդունված N 526-Ն որոշման /այսուհետև՝ Կարգ/ 67-րդ կետով և մրցույթի հրավերով գնահատող հանձնաժողովը կարող էր ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Իսկ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող էր ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր, ինչպես նաև գնման առարկա հանդիսացող ալյումինե թեյնիկը: Մասնավորապես, նման դեպքերում գնահատող հանձնաժողովը կարող էր պարզաբանումներ պահանջել՝ թե մասնակցից, թե այլ պաշտոնական աղբյուրներից: Սակայն տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը որևէ քայլ չի ձեռնարկել: Գնահատող հանձնաժողովը չի պահպանել Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Տվյալ պարագայում գնահատումն իրականացվել է կամայական ձևաչափով: Թեև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով շեշտադրվում է այն հանգամանքը, որ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, այդուհանդերձ, հարկ է նկատել, որ գնահատող հանձնաժողովի որոշումը բովանդակային առումով վարչական ակտին բնորոշ

ակտ է, քանի որ համապատասխան մասնակցի և պատվիրատուի միջև պայմանագիր կնքելու հարցն ուղղակիորեն պայմանավորվում է այդ որոշմամբ: Հետևաբար՝ համանման հարաբերություններ կարգավորող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքը («Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը») օրենքի անալոգիայով կիրառելի է նաև գնահատող հանձնաժողովի գործունեության նկատմամբ: Ավելին, անգամ անկախ մեջբերված դրույթից և իրավահարաբերության տեսակից (վարչական կամ քաղաքացիաիրավական), տվյալ կոնկրետ իրավահարաբերության յուրաքանչյուր մասնակից իր գործողություններում կաշկանդված է օրենքով կամ այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակով և իր իրավազորության տիրույթից դուրս որևէ գործողություն պետք է որակվի որպես հակահիրավական արարք: Հակառակ դեպքում ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը ցանկացած ժամանակ կարող է շրջանցել օրենքը, պահանջել, որ միայն հրավերով նշված բնութագիրը պետք է ներկայացվի, այլ ոչ համարժեք կամ մանրամասն նկարագրման տեսքով: Հանձնաժողովը անտեսելով վերը թվարկված հանգամանքները կարող է ընդունել կամայական որոշումներ, ինչի արդյունքում կարժեզրկվեն այդ հանձնաժողովի գործունեությունը կանոնակարգող իրավանորմերը՝ վերածվելով հռչակագրային դրույթների և, որպես հետևանք, կձևավորվի անկանխատեսելի իրավակիրառ պրակտիկա, ինչը հարիր չէ սահմանադրորեն իրավական բնորոշվող պետությանը: Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր գնահատումն իրականացնել՝ հաշվի առնելով ներկայացրած ապրանքի բնութագրիչ հատկանիշները: Վերլուծելով վերոգրյալը մեկ համատեքստում, ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ոչ պրոֆեսոնալ կերպով, ինչպես նաև մրցույթի հրավերի պահանջներին հակասող, քանի որ ընկերությունը ներկայացրել է կոնկրետ այն ապրանքի ավելի մանրամասն տեխնիկական բնութագիրը, որը ցանկանում է պատվիրատուն ձեռք բերել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Պարթև Մուշեղյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.06.2018թ. թիվ 03/26-3/10354-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.05.2018թ. թիվ ԴՎԱ/1492 գգրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի N 5, 22.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 6, 29.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N7 արձանագրությունները, «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, Ընթացակարգի մասնակիցների որակավորման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության պետի կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը, Ընկերության 13.06.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային ծառայության տեխնիկական միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի 30-րդ չափաբաժնով սահմանված ապրանքի հատկանիշները հետևյալն են. «Խոհանոցային սպասք /Թեյնիկ/ – Թեյնիկ 3լ-ոց՝ ալյումինե կափարիչով, ԳՕՍՏ Р 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի թերթավոր ալյումինից: Թեյնիկի հիմքի տրամագիծը Փ210-ից 220մմ: Բարձրությունը՝ 110-120մմ: Մետաղի հաստությունը հիմքի հատվածում՝ 1,5-ից 2,5մմ: Թեյնիկները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75: Փաթեթը տեղադրված ստվարաթղթե արկղում, յուրաքանչյուր արկղում՝ 4 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնշված՝ «արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ», արտադրող և

մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին»:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը):

Հանձնաժողովի 23.04.2018թ. ժամը 11:30-ի տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 8-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ, 27-րդ և 30-րդ չափաբաժինների մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակացորմըան չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 6 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 30-րդ չափաբաժնի մասով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում 30-րդ չափաբաժնի մասով ներկայացրած ապրանքի բնութագրին՝ բազմաթիվ պարամետրերով, այն է՝ տարողությունը (առնվազն), ջերմամեկուսիչ բռնակը, հիմքի

տրամագիծը (մինչև 220մմ), բարձրությունը նշված չէ (քթիկի բացարձակ բարձրությունը), փաթեթավորումը (համաձայն ԳՈՍՏ-ի և հրավերով նախատեսվածի): Անհրաժեշտ է պարամետրերը սահմանել համաձայն այդ ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի:

Նույն օրը Հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով նույնաբովանդակ ծանուցում է ուղարկել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին՝ պահանջելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը 24.05.2018թ. ներկայացրել է Հավելված 6.1-ի շտկված տարբերակը, որտեղ 30-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքն ունի հետևյալ նկարագիրը. «Թեյնիկ՝ ալյումինե կափարիչով, ԳՕՍՏ Р 17151-81, սննդի միջավայրում թույլատրելի թերթավոր ալյումինից: Թեյնիկի աշխատանքային տարողությունը հնարավորություն է տալիս այն 3 լիտր հեղուկ լիցքավորելու և աշխատանքի ընթացքում օգտագործելու՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց, առանց հեղուկը թափվելու: Թեյնիկի հիմքից մինչև տարողության վերին հատվածի բարձրությունը 110-120մմ: Թեյնիկի հիմքի տրամագիծը՝ ոչ ավել Փ220մմ: Մետաղի հաստությունը հիմքի հատվածում՝ 1,5-ից 2,5մմ: Թեյնիկները փաթեթավորված թղթով ԳՕՍՏ 8273-75 կամ տեղադրված անհատական ստվարաթղթե արկղում: Փաթեթը կամ արկղը տեղադրված ստվարաթղթե արկղում, յուրաքանչյուր արկղում 4 հատ: Արկղը պիտակավորված: Պիտակավորման չափը 150մմX200մմ +/-2%: Պիտակի վրա մակնշված՝ «արտադրված է ՀՀ ՊՆ կարիքների համար, վաճառքի ենթակա չէ», արտադրող և մատակարար կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը, ապրանքի անվանումը, քանակը, արտադրության ամիսը և տարին»:

29.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 7 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են համապատասխան շտկումները, սակայն 30-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել մասնագիտական եզրակացության: Համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից 30.05.2018թ. ելք 514/1620 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացության՝ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից 30-րդ չափաբաժնի մասով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին,

ուստի այդ չափաբաժնի մասով «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեց:

Ըստ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված մասնագիտական եզրակացության՝ 30-րդ չափաբաժնի մասով պահանջվել է, որպեսզի թեյնիկի հիմքի տրամագիծը լինի Φ210-ից 220մմ, սակայն մասնակցի կողմից առաջարկվել է թեյնիկի հիմքի տրամագիծը ոչ ավել Φ220մմ, ինչը ենթադրում է, որ առաջարկված թեյնիկի հիմքի տրամագիծը կարող է կազմել նաև Φ210-ից պակաս, որը համարժեք չէ մրցույթով ներկայացված թեյնիկի հիմքի տրամագծի չափերին:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը կարծիք հայտնեց, որ վերը նշված մեկնաբանությունը անտրամաբանական է և չի բխում գնման առարկայի նշանակությունից ու օգտագործման բնույթից, քանի որ էական նշանակություն ունի այն փաստը, որ թեյնիկի աշխատանքային տարողությունը հնարավորություն տա այն երեք լիտր հեղուկ լիցքավորելու, և աշխատանքի ընթացքում հնարավոր լինի օգտագործել՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց՝ առանց հեղուկը թափվելու, ինչը և ապահովում է «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ (...)պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական

բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/26» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի

(ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի 7.17 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամա-պատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխա¬տանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և

մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

• 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին

մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության կողմից Հանձնաժողովի պահանջով Հրավերի Հավելված 6.1-ով ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագրում կատարվել են համապատասխան շտկումներ՝ այն համապատասխանեցնելով Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին, ընդ որում, թեյնիկի հիմքի տրամագիծը Ընկերության կողմից նշվել է՝ ոչ ավել Փ220մմ:

Ինչ վերաբերում է Ընկերության հայտը մերժելու հիմք ծառայած Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված մասնագիտական եզրակացության, ըստ որի 30-րդ չափաբաժնի մասով պահանջվել է, որպեսզի թեյնիկի հիմքի տրամագիծը լինի Փ210-ից 220մմ, սակայն մասնակցի կողմից առաջարկվել է թեյնիկի հիմքի տրամագիծը ոչ ավել Փ220մմ, ինչը ենթադրում է, որ առաջարկված թեյնիկի հիմքի տրամագիծը կարող է կազմել նաև Փ210-ից պակաս, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ մասնագիտական եզրակացության հիման վրա Ընկերության հայտը մերժելն անիմն է, քանի որ Ընկերությանը տրված պարզաբանմամբ Պատվիրատուն նշել է, որ թեյնիկի տեխնիկական բնութագիրը կազմելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ թեյնիկի աշխատանքային տարողությունը հնարավորություն տա այն 3 լիտր հեղուկ լիցքավորել և աշխատանքի ընթացքում հնարավոր լինի օգտագործել՝ տեղափոխելուց, գավաթների մեջ լցնելուց հեղուկը առանց թափվելու, իսկ նշված եզրակացությամբ չի ապացուցվել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքը չի ապահովում պարզաբանմամբ ներկայացված չափանիշները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.06.2018թ. թիվ 03/26-3/10354-18 գրությամբ «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00114153/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ